Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.04.2018թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մանուկյան

Ռ. Ադամյան

Վ. Առաքելյան

Գ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա. Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի ապրիլի 18-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	Ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ, 6/6	2 755 000	-	2 755 000
2	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ	ՀՀ ք. Երևան, Հալաբյան 11-36	3 500 000	-	3 500 000
3	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ >> ՍՊԸ	ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 24/1, բն. 43	4 000 000	-	4 000 000
4	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ	Ք. Երևան, Թոթովենցի 12/28	4 270 000	-	4 270 000
5	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	ք. Հրազդան, Միկրոշրջան 209/14	4 500 000	900 000	5 400 000
6	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ. Նար-Դոսի 28ա	4 920 000	-	4 920 000

7	<<Վանարխ>> ՍՊԸ	ք. Վանաձոր, Տաթևի փ., տուն 14	5 000 000	-	5 000 000
8	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	ք.Գյումրի, փ.Ծուղուկիձե 5	5 800 000	-	5 800 000
9	<<ՀԳՇՆ>> ՍՊԸ	Երևան 0028, Կիևյան 16	5 833 333	1 166 667	7 000 000
10	<<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բաթումի 15/27	8 450 000	-	8 450 000
11	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	ք.Վանաձոր, Վարդանանց 23/159	Armeps համակարգում փաստաթղթերը կցված չեն		

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 25.04.2018թ. ժամը 11:00-ին:

ե) Գնման ընթացակարգի մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

- <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը Armeps համակարգում կցված չեն:

- <<Վանաձորի նախագծող>> և <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6 ենթակետի հողումը, համաձայն որի՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, իսկ նշված կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում ներառվող փաստաթղթերը՝ այդ թվում նաև գնային առաջարկը ստորագրված են միայն <<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ-ի կողմից:

- <<Վանարխ>> ՍՊԸ-ի և <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 2.1-ում նշված չեն մասնակցի իրական շահառուների հայրանունները (համաձայն աղյուսակով սահմանված պահանջի):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը 25.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի ընթացքում որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները և հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո, բայց ոչ ուշ, քան 27.04.2018թ. ժամը 11:00-ին:

<<Վանարխ>> ՍՊԸ-ի և <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի կողմից 25.04.2018թ.-ի ժամը 16:40 դրությամբ շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Քոչարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	բավարար
2	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ	բավարար
3	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	բավարար
4	<<Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ>> ՍՊԸ	բավարար
5	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
6	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	բավարար
7	<<Վանարխ>> ՍՊԸ	բավարար
8	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	բավարար
9	<<ՀԳՇՆ>> ՍՊԸ	բավարար
-	<<Վանաձորի նախագծող>> ՍՊԸ	անբավարար
-	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Քոչարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի մայիսի 5-ին ժամը 11:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Քոչարյան

Անդամներ՝ ---------- Ն. Մանուկյան

---------- Ռ. Ադամյան

---------- Վ. Առաքելյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան